ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Ախալցխա, 14 հոկտ.

Ամենախուլ գաւառական անկիւններում անգամ լինում են հասարակական մեծ նշանակութիւն ունեցող այնպիսի դէպքեր, երբ տեղական ժողովուրդը զարթնում է իր լեթարգիական քնից և աշխատում որևէ գործով ցոյց տալու իր գոյութիւնը։

Սակայն այդպէս չէ Ախալցխան։

Հայ հասարակական կեանքի այնքան մեծ նշանակութիւն ունեցած մի դէպք անգամ, ինչպիսին տաճարի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեաններն են, անկարող եղաւ զարթեցնելու տեղական հասարակութեան ինքնագիտակցութեան մեռած զգացմունքը, և ազգային այդ մեծ տօնը անցաւ միանգամայն անշուք ու աննկատելի։

Միակ նկատելի ու շօշափելի գործը, որով Ախալցխան ցոյց տուեց, որ ինքն էլ տօնել է ազգային մեծ յօբելեանները, այդ հանդիսաւոր պատարագն էր ս. Փրկիչ մայր եկեղեցում։ Պատարագիչն էր տեղական յաջորդը, որը ըստ աւուր պատշաճի մի քանի խօսք ասաց, սակայն շատ համառօտ ու մեծամասնութեանը անհասկանալի, և յորդորեց հասարակութեանը պահպանելու իր դպրոցը, եկեղեցին, սիրելու իր մայրենի լեզուն։

Եկեղեցին լի էր կանանցով, իսկ տղամարդկանց մասում միայն տեղական աշակերտութիւնն էր իրանց ուսուցչական կազմերով, և կրկնողութեան կոչված պահեստի հայ զինուորները։ Բացակայում էր տեղական հասարակութիւնը, մանաւանդ այսպէս անուանվող «ինտելիգենտ» դասակարգը, որի մշտական ժամանցի տեղը սրճարաններն ու զբօսատեղիներն են և որի համար հասարակական ոչ մի գործ գոյութիւն չունի, եթէ միայն իր անձնական շահերի տեսակէտից այդ գործը ոչ մի շահ չէ ներկայացնում։

Եւ այսպէս անշուք կերպով տօնեց Ախալցխան մեր ազգային վերածնութեան երկու հսկայ գործօնների—տաճարի ու տպագրութեան—յօբելեանները, և ընդհանուր անտարբերութեան ու սառնասրտութեան մէջ կարծես մի տեսակ իրօնիա էին նկատվում եկեղեցու հանդէպ գտնվող տպարանի փողոցի պատերից կախված ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները և թղթէ զարդարանքները։ Վաղարշակ Թումանեան

—

Կաքաւաբերդ, 12 հոկտ.

Ամսոյս 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, տեղիս դպրոցի դահլիճում տօնվեց համազգային մեծ յօբելեանը գրական և երաժշտական հանդէսով։

Առաւօտեան ժամը 9-ին տեղիս ս. Աստուածածին եկեղեցում կատարվեց հանդիսաւոր պատարագ աշակերտութեան, ուսուցիչների, հոգաբարձութեան և հոծ հասարակութեան ներկայութեամբ։ Եկեղեցում աւագ ուսուցիչ Յ. Նիկողոսեանը խօսեց համազգային մեծ յօբելեանի շուրջը, դրուատելով Մեսրոպ Մաշտոցի և Յովհան Գուտենբերգի նշանակութիւնը քաղաքացիական կեանքում։ Պատարագից յետոյ կատարվեցին հայրապետական և կայսերական մաղթանքներ և հոգեհանգիստ հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին, ապա տեղի ունեցաւ հանդիսաւոր երեկ եկեղեցուց դէպի դպրոց։

Դպրոցական հանդէսը սկսվեց ժ. 12-ին և բացվեց «Հայր մեր-ով», որը երգում էր դպրոցիս երգեցիկ խումբը ղեկավարութեամբ ուսուցչուհի Վրացեանի։ Հանդէսի ժամանակ բանախօսեցին ուսուցիչներ Տէր-Առաքելեան և Խան-Ազեան, առաջինը՝ անցեալ ու ներկայ դպրոցի մասին, երկրորդը՝ հինգերորդ դարի հայ կանանց և կնոջ կրթութեան անհրաժեշտութեան մասին։ Արտասանվեցին մի շարք ոտանաւորներ, երգվեցին ազգային և ժողովրդական երգեր։ Հանդէսից յետոյ հասարակութիւնը ի պատիւ ուսուցչութեան ու հիւրերի տուեց ճաշկերոյթ։

Ժամը 3½-ին Նիկողոսեանի առաջարկութեամբ դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով։ Ժողովի օրակարգն էր՝ յաւերժացնել մի գեղեցիկ գործով այս եզակի տօնը։

Ժողովի նախագահ Տէր-Սարգսեանը ժողովը բաց անելով հրաւիրեց հիւրերին կազմակերպված ոյժերով հրապարակ գալու։

Նիկողոսեան ձայն խնդրելով՝ խօսեց առ հասարակ կրթութեան և ուսման շուրջը, երկար կանգ առաւ ուսման անհրաժեշտութեան մասին և ցանկութիւն յայտնեց, որ հասարակութիւնը յաւերժացնի այս տօնը պարտադիր ուսումով։

Խորհրդակցական ժողովը որոշեց այս ժողովը անուանել նախապատրաստական, որը ցանկութիւն յայտնեց մտցնել շրջանումս պարտադիր ուսում և այս առիթով յետագայում գումարել մի բազմամարդ ժողով։

Ապա ժողովը շնորհակալութիւն յայտնե-

լով ուսուցչ. խմբին իր կազմակերպած հանդէսի համար՝ ժամը 6-ին ցրվեց գոհ սրտով։ Խորհրդակցական ժողովին մասնակցում էին մօտ 40 մարդ։

Նոյն յօրելեանի առիթով, տեղիս դպրոցը անուանվելու է «Կաքաւաբերդի Կենտր. Սահակ-Մեսրոպեան» դպրոց. վճռվեց նոյնպէս՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի մեծադիր նկարները կախել դպրոցի դահլիճում։

Ուսուցչ. խումբը պարտադիր ուսման շուրջը կատարելու է մի շարք դասախօսութիւններ և հանդէսներ։ Նոյն խումբը միաժամանակ հեռագրով շնորհաւորել է այս տօնը Էջմիածնի կենտրոնական յանձնաժողովին, նշանակելով Միքայէլ Սարգսեանին իր ներկայացուցիչը։

Տ—եան

Ծանօթ. Ամբ.—Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Կաքաւաբերդի ուսուցչ. խմբի կողմից ընտրված ներկայացուցիչը իր կամքից անկախ պատճառով չէ կարողացել ներկայ լինել Էջմիածին՝ համազգային տօնին։ Նոյնպէս տեղեկանում ենք, որ, Կաքաւաբերդի մանկավարժ. խմբի ծրագրի համաձայն, այդ շրջանում պարտադիր ուսում մացվելու է հինգ տարվայ ժամանակամիջոցում։